

Հաստատված է

*Քաղաքացիական հասարակության
կազմակերպությունների հակակոռուպցիոն
կոալիցիայի անդամների հիմադիր ժողովի
կողմից*

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈԱԼԻՑԻԱՅԻ**

2015-2016թթ.

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 28 նոյեմբերի 2014թ.

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հակակոռուպցիոն կոալիցիան (այսուհետ՝ Կոալիցիա) կարևորելով Հայաստանում ընթացող հակակոռուպցիոն բարեփոխումների մշակել է սույն մոնիթորինգային ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր):

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է.

Խնդիր 1.

Հանրային վերահսկողության և մոնիթորինգի ենթարկել ՀՀ կառավարության ծրագրի հակակոռուպցիոն ասպեկտները.

Գործողություն 1.1

Պարզել ծրագրով նախատեսված գործողությունների և աշխատանքների իրականացման ժամանակացույցից շեղվելու և հետաձգելու փաստերը.

Ժամանակահատված՝ 2015-2016թթ.

Պատասխանատու՝ ՔՀԿ հակակոռուպցիոն կոալիցիայի ՀՀ կառավարության ծրագրի հակակոռուպցիոն ասպեկտների մոնիթորինգի հանձնախումբ, ՔՀԿ հակակոռուպցիոն կոալիցիայի անդամ ՔՀԿ-ներ

Գործողություն 1.2

Մոնիթորինգի ենթարկել ծրագրի շրջանակներում կատարվելիք պետական գնումները.

Ժամանակահատված՝ 2015-2016

Պատասխանատու՝ ՔՀԿ հակակոռուպցիոն կոալիցիայի ՀՀ կառավարության ծրագրի հակակոռուպցիոն ասպեկտների մոնիթորինգի հանձնախումբ, ՔՀԿ հակակոռուպցիոն կոալիցիայի անդամ ՔՀԿ-ներ

Ակնկալվող արդյունքներ

Արձանագրվել են ՀՀ կառավարության ծրագրով նախատեսված հակակոռուպցիոն գործողությունների և աշխատանքների իրականացման ժամանակացույցից շեղվելու ու հետաձգելու փաստերը: Վեր են հանվել ծրագրի շրջանակներում կատարված պետական գնումների իրականացման ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը: Դրանց վերաբերյալ հաշվետվություններն ու առաջարկությունները ներկայացվել են ՀՀ կառավարությանը, ոլորտային նախարարություններին, Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին, միջազգային կազմակերպություններին և շահագրգիռ այլ անձանց: Հանրային վերահսկողության և մոնիթորինգի հաշվետվությունները հանրայնացվել են, հրապարակվել են ինտերնետային կայքերի միջոցով, այդ թվում Իրավաբան.net-ի միջոցով:

Խնդիր 2.

Հանրային վերահսկողության և մոնիթորինգի ենթարկել ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը.

Գործողություն 2.1

Պարզել ծրագրով նախատեսված գործողությունների և աշխատանքների իրականացման ժամանակացույցից շեղվելու և հետաձգելու փաստերը.

Շամանակահատված՝ 2015-2016թթ.

Պատասխանատու՝ ՔՀԿ հակակոռուպցիոն կոալիցիայի ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրի մոնիթորինգի հանձնախումբ, ՔՀԿ հակակոռուպցիոն կոալիցիայի անդամ ՔՀԿ-ներ

Գործողություն 2.2

Մոնիթորինգի ենթարկել ծրագրով նախատեսված պետական գնումները.

Շամանակահատված՝ 2015-2016

Պատասխանատու՝ ՔՀԿ հակակոռուպցիոն կոալիցիայի ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրի մոնիթորինգի հանձնախումբ, ՔՀԿ հակակոռուպցիոն կոալիցիայի անդամ ՔՀԿ-ներ

Ակնկալվող արդյունքներ

Արձանագրվել են ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրի գործողությունների և աշխատանքների իրականացման ժամանակացույցից շեղվելու ու հետաձգելու փաստերը: Վեր են հանվել ծրագրի շրջանակներում կատարված պետական գնումների իրականացման ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը: Դրանց վերաբերյալ հաշվետվություններն ու առաջարկությունները ներկայացվել են ՀՀ կառավարությանը, ՀՀ արդարադատության նախարարությանը, Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին, միջազգային կազմակերպություններին և շահագրիռ այլ անձանց: Հանրային վերահսկողության և մոնիթորինգի հաշվետվությունները հանրայնացվել են, հրապարակվել են ինտերնետային կայքերի միջոցով, այդ թվում Իրավաբան.net-ի միջոցով:

Խնդիր 3.

Հանրային վերահսկողության և մոնիթորինգի ենթարկել Հայաստանի Հանրապետության Հակակոռուպցիոն ռազմավարության ծրագիրը և ծրագրով

նախատեսված հակակոռուպցիոն ծրագրերի առաջնահերթ իրականացման ոլորտները.

Գործողություն 3.1

Պարզել ծրագրով նախատեսված գործողությունների և աշխատանքների (բացառությամբ հակակոռուպցիոն ծրագրերի առաջնահերթ իրականացման ոլորտները) արդյունավետությունը, դրանց իրականացման ժամանակացույցից շեղվելու և հետաձգելու փաստերը.

Ժամանակահատված՝ 2015-2016թթ.

Պատասխանատու՝ ՔՀԿ հակակոռուպցիոն կոալիցիայի ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի մոնիթորինգի հանձնախումբ, ՔՀԿ հակակոռուպցիոն կոալիցիայի անդամ ՔՀԿ-ներ

Գործողություն 3.2

Պարզել ծրագրի կրթության ոլորտում նախատեսված գործողությունների և աշխատանքների իրականացման ժամանակացույցից շեղվելու և հետաձգելու փաստերը.

Ժամանակահատված՝ 2015-2016թթ.

Պատասխանատու՝ ՔՀԿ հակակոռուպցիոն կոալիցիայի ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի մոնիթորինգի հանձնախմբի Կրթության ոլորտի ենթահանձնախումբ, ՔՀԿ հակակոռուպցիոն կոալիցիայի անդամ ՔՀԿ-ներ

Գործողություն 3.3

Մոնիթորինգի ենթարկել ծրագրի կրթության ոլորտում նախատեսված պետական գնումները.

Ժամանակահատված՝ 2015-2016

Պատասխանատու՝ ՔՀԿ հակակոռուպցիոն կոալիցիայի ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի մոնիթորինգի հանձնախմբի Կրթության ոլորտի ենթահանձնախումբ, ՔՀԿ հակակոռուպցիոն կոալիցիայի անդամ ՔՀԿ-ներ

Գործողություն 3.4

Պարզել ծրագրի պետական եկամուտների հավաքագրման ոլորտում նախատեսված գործողությունների և աշխատանքների իրականացման ժամանակացույցից շեղվելու և հետաձգելու փաստերը.

Ժամանակահատված՝ 2015-2016թթ.

Պատասխանատու՝ ՔՀԿ հակակոռուպցիոն կոալիցիայի ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի մոնիթորինգի հանձնախմբի Պետական եկամուտների հավաքագրման ոլորտի ենթահանձնախումբ, ՔՀԿ հակակոռուպցիոն կոալիցիայի անդամ ՔՀԿ-ներ

Գործողություն 3.5

Մոնիթորինգի ենթարկել ծրագրի պետական եկամուտների հավաքագրման ոլորտում նախատեսված պետական գնումները.

Ժամանակահատված՝ 2015-2016

Պատասխանատու՝ ՔՀԿ հակակոռուպցիոն կոալիցիայի ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի մոնիթորինգի հանձնախմբի Պետական եկամուտների հավաքագրման ոլորտի ենթահանձնախումբ, ՔՀԿ հակակոռուպցիոն կոալիցիայի անդամ ՔՀԿ-ներ

Գործողություն 3.6

Պարզել ծրագրի քաղաքացիներին ծառայությունների մատուցման մասով ուստիկանության ոլորտում նախատեսված գործողությունների և աշխատանքների իրականացման ժամանակացույցից շեղվելու և հետաձգելու փաստերը.

Ժամանակահատված՝ 2015-2016թթ.

Պատասխանատու՝ ՔՀԿ հակակոռուպցիոն կոալիցիայի ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի մոնիթորինգի հանձնախմբի Քաղաքացիներին ծառայությունների մատուցման մասով ուստիկանության ոլորտի ենթահանձնախումբ, ՔՀԿ հակակոռուպցիոն կոալիցիայի անդամ ՔՀԿ-ներ

Գործողություն 3.7

Մոնիթորինգի ենթարկել ծրագրի քաղաքացիներին ծառայությունների մատուցման մասով ուստիկանության ոլորտում նախատեսված պետական գնումները.

Ժամանակահատված՝ 2015-2016

Պատասխանատու՝ ՔՀԿ հակակոռուպցիոն կոալիցիայի ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի մոնիթորինգի հանձնախմբի Քաղաքացիներին ծառայությունների մատուցման մասով ուստիկանության ոլորտի ենթահանձնախումբ, ՔՀԿ հակակոռուպցիոն կոալիցիայի անդամ ՔՀԿ-ներ

Գործողություն 3.8

Պարզել ծրագրի առողջապահության ոլորտում նախատեսված գործողությունների և աշխատանքների իրականացման ժամանակացույցից շեղվելու և հետաձգելու փաստերը.

Ժամանակահատված՝ 2015-2016թթ.

Պատասխանատու՝ ՔՀԿ հակակոռուպցիոն կոալիցիայի ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի մոնիթորինգի հանձնախմբի Առողջապահության ոլորտի ենթահանձնախումբ, ՔՀԿ հակակոռուպցիոն կոալիցիայի անդամ ՔՀԿ-ներ

Գործողություն 3.9

Մոնիթորինգի ենթարկել ծրագրի առողջապահության ոլորտում նախատեսված պետական գնումները.

Ժամանակահատված՝ 2015-2016

Պատասխանատու՝ ՔՀԿ հակակոռուպցիոն կոալիցիայի ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի մոնիթորինգի հանձնախմբի Առողջապահության ոլորտի ենթահանձնախումբ, ՔՀԿ հակակոռուպցիոն կոալիցիայի անդամ ՔՀԿ-ներ

Ակնկալվող արդյունքներ

Արձանագրվել են Հայաստանի Հանրապետության Հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրով նախատեսված գործողությունների և աշխատանքների իրականացման անարդյունավետության դեպքերը, իրականացման ժամանակացույցից շեղվելու ու հետաձգելու փաստերը, ինչպես նաև ծրագրի հակակոռուպցիոն ծրագրերի առաջնահերթ իրականացման ոլորտներով նախատեսված գործողությունների և աշխատանքների իրականացման ժամանակացույցից շեղվելու ու հետաձգելու փաստերը: Վեր են հանվել ծրագրի և ծրագրի հակակոռուպցիոն ծրագրերի առաջնահերթ իրականացման ոլորտների շրջանակներում կատարված պետական գնումների իրականացման ընթացքում առկա կոռուպցիոն ռիսկերը: Դրանց վերաբերյալ հաշվետվություններն ու առաջարկությունները ներկայացվել են ՀՀ կառավարությանը, ոլորտային նախարարություններին, Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին, միջազգային կազմակերպություններին և շահագրիռ այլ անձանց: Հանրային վերահսկողության և մոնիթորինգի հաշվետվությունները հանրայնացվել են, հրապարակվել են ինտերնետային կայքերի միջոցով, այդ թվում Իրավաբան.net-ի միջոցով:

Խնդիր 4.

Հանրային վերահսկողության և մոնիթորինգի ենթարկել Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ՀՀ-ի կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների կատարումը.

Գործողություն 4.1

Պարզել Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ՀՀ-ի կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների կատարմանը ուղղված գործողությունների և աշխատանքների իրականացման ժամանակացույցից շեղվելու և հետաձգելու փաստերը.

Ժամանակահատված՝ 2015-2016թթ.

Պատասխանատու՝ ՔՀԿ հակակոռուպցիոն կոալիցիայի Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ՀՀ-ի կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման մոնիթորինգի հանձնախումբ, ՔՀԿ հակակոռուպցիոն կոալիցիայի անդամ ՔՀԿ-ներ

Ակնկալվող արդյունքներ

Արձանագրվել են Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ՀՀ-ի կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման ժամանակացույցից շեղվելու ու հետաձգելու փաստերը: Դրանց վերաբերյալ հաշվետվություններն ու առաջարկությունները ներկայացվել են ՀՀ կառավարությանը, Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին, միջազգային կազմակերպություններին և շահագրիտ այլ անձանց: Հանրային վերահսկողության և մոնիթորինգի հաշվետվությունները հանրայնացվել են, հրապարակվել են ինտերնետային կայքերի միջոցով, այդ թվում Իրավաբան.net-ի միջոցով: